

Հավելված
Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության
պաշտպանության պետական հանձնաժողովի
2014 թվականի ապրիլի 29-ի թիվ 157-Ա որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2014թ.

Բովանդակություն

Ներածություն	3
Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության մասին	4
Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն	13
Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումները.....	21
Գլուխ 3.1 Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծություն.....	31
Գլուխ 4. Հանձնաժողովի գործունեության ֆինանսական հաշվետվություն	34

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը կազմվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթներին համապատասխան:

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղված է եղել Օրենքով ամրագրված գործառույթների իրականացմանը, «Հանձնաժողովի 2013 թվականի տարեկան գործունեության ծրագրի» կատարմանը և միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարմանը:

Հանձնաժողովը 2013 թվականին շարունակել է աշխատանքներն ուղղված ապրանքային շուկաների ուսումնասիրությանը, ապրանքային շուկաներում Օրենքի հնարավոր խախտումների բացահայտմանը, կանխմանը և արգելմանը, սպառողների շահերի պաշտպանության և ձեռնարկատիրության զարգացման նպատակով մրցակցության խրախուսմանը նպաստելուն: Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացրել նաև իր գործունեության հրապարակայնության ապահովման, հասարակության իրազեկման, պետական մարմինների, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության, Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից ենթաօրենսդրական ակտերի (կարգերի) ընդունման և կատարելագործման ուղղություններով:

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ

Հանձնաժողովի կողմից 2013 թվականին աշխատանքներն իրականացվել են տնտեսվարող սուբյեկտների՝ մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող գործողությունների կամ վարքագծի ուսումնասիրության, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման հնարավոր դեպքերի քննարկման և որոշումների ընդունման, ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ուղղություններով:

Հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում իր ուշադրությունն առավել կենտրոնացրել է սոցիալական նշանակություն ունեցող ապրանքային շուկայի վրա ազդեցություն ունեցող մրցակցային խնդիրներին: Մասնավորապես հարուցվել են մի շարք վարչական վարույթներ պետական գնումների կազմակերպման գործընթացում մրցակցային օրենսդրության խախտումների, շուկայի մուտքի խոչընդոտների բացահայտման և կանխարգելման ուղղությամբ:

Հանձնաժողովի կողմից տարվա ընթացքում հայտնաբերվել են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից դիրքի չարաշահման, տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունների դեպքեր, որոնց առնչությամբ Հանձնաժողովը կայացրել է համապատասխան որոշումներ և կիրառել է պատասխանատվության միջոցներ:

Հանձնաժողովն իրականացրել է աշխատանքներ համակենտրոնացումների կարգավորման ուղղությամբ, ինչը միտված է ապահովելու ապրանքային շուկաների մրցունակ կառուցվածքը՝ միջամտելով գերիշխող կամ մենաշնորհային դիրքի հանգեցնող գործարքներին: Ի դեպ, վերջին տարիներին զգալի աճ է նկատվել համակենտրոնացումներին առնչվող վարչական վարույթների հարուցման առումով, ինչը պայմանավորված է Հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների և հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացմամբ: Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հիման վրա տարվա ընթացքում կատարվել են ուսումնասիրություններ Օրենքի հնարավոր խախտումների՝ տնտեսվարող սուբյեկտների միացումների, միաձուլումների, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումների և այլ միավորումների վերաբերյալ:

Հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում բացահայտել է նաև անբարեխիղճ մրցակցության դրսևորումների մի շարք դեպքեր, որոնց առնչությամբ տնտեսվարող սուբյեկտներին հանձնարարվել է դադարեցնել և հետագայում բացառել անբարեխիղճ մրցակցության արձանագրված դեպքերը:

Հանձնաժողովի կողմից իրականացվել է մի շարք ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն, որոշվել և գնահատվել է ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը, դրանցում մասնակից տնտեսվարող սուբյեկտների թիվը, գերիշխող դիրքի առկայությունը: Հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում ընդունել է 417 որոշում: Հարուցվել է շուրջ 182 վարչական վարույթ, որից 122-ը՝ Հանձնաժողովի սեփական նախաձեռնությամբ, իսկ 60-ը՝ համապատասխան դիմումների հիման վրա: Հանձնաժողովի կողմից ընդունվել են 144

պատասխանատվության միջոցներ սահմանող որոշումներ: Ընդունված պատասխանատվության միջոցների որոշումներից 63-ն առնչվում են անբարեխիղճ մրցակցությանը, 3-ը՝ գերիշխող դիրքի չարաշահմանը, 4-ը՝ համակենտրոնացումներին և 2 որոշում վերաբերում է 8 տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնություններին: Օրենքի խախտման համար շուրջ 31 տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվել է առավել խիստ պատժաչափ՝ տուգանք, իսկ շուրջ 113 տնտեսվարողի նկատմամբ՝ նախազգուշացում: Հանձնաժողովի կողմից 2013 թվականի ընթացքում ընդունված որոշումներով նշանակված տուգանքների գումարը կազմել է 126 մլն դրամ, մասնավորապես. 10 մլն դրամ՝ գերիշխող դիրքի չարաշահման երևույթների, 57 մլն դրամ՝ բացահայտված անբարեխիղճ մրցակցության դրսևորումների, 45 մլն դրամ՝ հակամրցակցային համաձայնությունների և 14 մլն դրամ՝ Հանձնաժողովի կողմից պահանջվող տեղեկատվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու համար: Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների արդյունքում, այդ թվում նաև նախորդ տարիների, 2013 թվականին սահմանված կարգով պետական բյուջե փոխանցված տուգանքների գումարը կազմել է 150 մլն դրամ: Դատական ատյաններում բողաքարկված Հանձնաժողովի որոշումների քանակը կազմել է 13 որոշում, որոնցից 1-ը մնացել է անփոփոխ, իսկ մնացած 12 գործով դատական քննությունը շարունակվում է:

Համակենտրոնացումների մասով մրցակցային օրենսդրության կիրարկման արդյունքում, 2013 թվականի ընթացքում Հանձնաժողովը կայացրել է ընկերությունների համակենտրոնացումներին առնչվող շուրջ 40 որոշում: Ընկերությունների կողմից չհայտարարագրված համակենտրոնացումը գործողության մեջ դնելու համար Հանձնաժողովն ընդունել է պատասխանատվության միջոցի կիրառման 4 որոշում՝ ընկերությունների նկատմամբ սահմանելով նախազգուշացում: Նույն ժամանակահատվածում ընդունվել է համակենտրոնացումների թույլտվության թվով 13 որոշում և ընկերություններին անձանց խումբ համարելու 8 որոշում:

Մշտապես Հանձնաժողովը հսկողություն է իրականացրել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեության նկատմամբ: Վերջիններիս կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հիման վրա իրականացվել է այդ տնտեսվարող սուբյեկտների գործունեության վերահսկողություն: Մասնավորապես Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են եղել 57 պարենային ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող 62 տնտեսվարող սուբյեկտ, ոչ պարենային 73 ապրանքային շուկաներում գործող 45 տնտեսվարող սուբյեկտ, դեղերի 17 շուկաներում գործող 11 տնտեսվարող սուբյեկտ:

Հանձնաժողովը մշտական վերահսկողություն է իրականացրել ոչ միայն ապրանքների արտադրությամբ, ներկրմամբ և իրացմամբ զբաղվող տնտեսվարողների, այլ նաև խոշոր առևտրային ցանցերի վարքագծի նկատմամբ: Հանձնաժողովը պարբերաբար իրականացրել է դիտանցում՝ գերիշխող դիրք ունեցող առևտրային ցանցերում առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքների մանրածախ գների փոփոխության հիմնավորվածությունը ստուգելու և օպերատիվ տեղեկատվություն ստանալու նպատակով: Տվյալ տեղեկատվությունը հիմք է հանդիսացել ուսումնասիրություններ սկսելու և տնտեսվարող սուբյեկտների կողմից մրցակցության օրենսդրության խախտումների կանխարգելման և դադարեցման ուղղությամբ վարույթներ հարուցելու համար: Հարկ է նշել, որ նմանատիպ

հսկողություն է իրականացվել գերիշխող դիրք ունեցող 8 պարենային ապրանքների առևտրային ցանցերի, 5 բենզալցակայանների ցանցերի, 9 դեղատների ցանցերի, 4 սալիկների ու սանիտարական տեխնիկայի, 5 էլեկտրատեխնիկայի, 5 կահույքի, 4 շինանյութերի և ջեռուցման համակարգերի առևտրային ցանցերի նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, Հանձնաժողովի կողմից 2013 թվականին իրականացվել է շուրջ 137 դիտանցում, երկօրյա դիտարկման են ենթարկվել բենզինի երեք տեսակների և դիզելային վառելիքի իրացման գները, ամենշաբաթյա պարբերականությամբ դիտարկվել են մեծածախ վաճառակետերում ցորենի ալյուրի իրացման գները, ամենամսյա պարբերականությամբ դիտարկվել են ոչ պարենային թվով 12 խումբ ապրանքների իրացման գները: Դիտանցումների ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը ոչ միայն կիրառվել է Հանձնաժողովի աշխատանքների ընթացքում, այլ նաև տրամադրվել է պետական մարմիններին՝ այդ կերպ հնարավորություն տալով ամենօրյա հսկողության տակ պահել ցանցային վաճառակետերում իրացվող, ինչպես նաև մատակարար տնտեսվարող սուբյեկտների կողմից առաջարկվող առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների գները:

Անբարեխիղճ մրցակցության հնարավոր դրսևորումների հայտնաբերման նպատակով Երևան քաղաքի մանրածախ վաճառակետերում՝ հագուստի, օժանելիքի խանութ-սրահներում իրականացվել է շուրջ 35 դիտանցում և կազմվել համապատասխան արձանագրություններ:

Հանձնաժողովի կողմից 2013 թվականի ընթացքում առաքվել է 2692 գրություն, մուտք է եղել շուրջ 6727 գրություն:

Հանձնաժողովի կողմից 2013 թվականի ընթացքում հայտարարվել և անցկացվել են քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոն զբաղեցնելու 1 և գլխավոր պաշտոններ զբաղեցնելու համար՝ 5 մրցույթ: Ատեստավորվել են Հանձնաժողովի աշխատակազմի 3 և վերապատրաստվել են 3 քաղաքացիական ծառայողներ:

Հանձնաժողովի նախագահի կողմից 2013 թվականին ընդունվել է Հանձնաժողովի ներքին աուդիտի 2013-2015 թվականների ռազմավարական ծրագիրը: Այս գործառույթի շրջանակում կատարվել է ռիսկերի կանխատեսում և կազմվել է Հանձնաժողովի հսկողության միջավայրի ստուգաթերթը, ինչպես նաև ընտրվել են ռիսկերի վերլուծության նպատակով կիրառվող չափորոշիչները, որոնց արդյունքում կազմակերպության նպատակների իրագործման առումով Հանձնաժողովի կառավարչական գործընթացները գնահատվել և ներառվել են ցածր ռիսկային խմբում:

Հանձնաժողովը 2013 թվականին շարունակել է լուսաբանել մրցակցության պաշտպանության բնագավառում տեղի ունեցող իրադարձությունները, իրականացվող աշխատանքները և կազմակերպել է մի շարք մամլո ասուլիսներ, ինչպես նաև տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող հարցերով բազմաթիվ հարցազրույցներ: Մամուլում պարբերաբար տպագրվել են Հանձնաժողովի նախագահի և աշխատակիցների հարցազրույցները, ինչպես նաև մրցակցային այս կամ այն հարցի վերաբերյալ մեկնաբանություններն ու տեսակետները: Տարբեր հեռուստաալիքներով եթեր են հեռարձակվել Հանձնաժողովի բոլոր հրապարակային նիստերը, ինչպես նաև կազմակերպվել են առանձին հաղորդումներ՝ հանրությանը հետաքրքրող արդիական թեմաների շուրջ: Հրապարակային աշխատանքները նպաստել են հասարակության շրջանում իրազեկվածության բարձրացմանը, որի արդյունքում նախորդ տարվա համեմատ 5 անգամ ավելացել են թեժ գծով ստացված տեղեկությունների քանակը:

Հանձնաժողովը շարունակել է ակտիվ աշխատել Հայաստանի Հանրապետության մարզային և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զանգվածային լրատվական միջոցների հետ:

Դրա հետ մեկտեղ մրցակցային օրենսդրության քարոզչության բարձրացման ուղղությամբ Գերմանիայի միջազգային համագործակցության կազմակերպության աջակցությամբ նկարահանվել և եթեր են հեռարձակվել Հանձնաժողովի գործունեությունը լուսաբանող և մրցակցային օրենսդրության որոշ դրույթներ մեկնաբանող երեք տեսահոլովակներ:

Միջազգային կառույցների հետ համագործակցության արդյունքում տարվա ընթացքում կազմակերպվել են նաև սեմինար-քննարկումներ՝ տնտեսական ոլորտը լուսաբանող երեք տասնյակից ավելի լրագրողների մասնակցությամբ: Նման միջոցառումները դրական են անդրադառնում, քանի որ լրագրողներն առավել հստակ պատկերացում են կազմում մրցակցային խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկանում են օրենսդրական փոփոխություններին, ինչի արդյունքում էլ մրցակցային թեմաներով հոդվածները տպագրվում կամ եթեր են հեռարձակվում հիմնականում մասնագիտական ճիշտ շեշտադրումներով:

Հանձնաժողովի գործունեության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը, Հայաստանի Հանրապետության պետական այլ մարմինների և միջազգային կառույցների հետ սերտ համագործակցությունը: Հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում իր միջազգային համագործակցությունն ուղղորդել է օտարերկրյա մրցակցային մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ կապերի ընդլայնմանը, տնտեսական մրցակցության քաղաքականության կիրարկման քարոզչությանը, Հանձնաժողովի դերի և գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ կադրային ներուժի հզորացման, կարողությունների զարգացման և որակավորման բարձրացման միջոցով, միջազգային փորձի ուսումնասիրության և առաջավոր փորձի ներդրմանը, երկկողմ ու բազմակողմ հարաբերությունների ընդլայնմանը, գործող մրցակցային օրենսդրական դաշտի բարելավմանը, ինչպես նաև միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարմանը:

Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանն անդամակցելու որոշման ընդունումից հետո աշխատանքներ է իրականացրել Մաքսային միությանը Հայաստանի Հանրապետության միանալու ուղղությամբ: Համաձայն Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2013 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 834-Ա որոշման՝ Հանձնաժողովի նախագահն ընդգրկվել է Մաքսային միությանը Հայաստանի Հանրապետության միացման գործընթացները համակարգող հանձնաժողովում, իսկ Հանձնաժողովի նախագահի տեղակալը հանդիսանում է Հակամենաշնորհային կարգավորման (հետագայում՝ մրցակցության հարցերով) աշխատանքային խմբի ղեկավար: Աշխատանքները հիմնականում ուղղված են եղել Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին միանալու միջոցառումների ծրագրի (ճանապարհային քարտեզ) նախագծի մշակմանը, դրանով նախատեսված միջոցառումների կետերի կատարմանը, ինչպես նաև խնդրահարույց հարցերի շուրջ բանակցությունների վարմանը:

Բազմակողմ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովն,

անդամակցելով Միջազգային մրցակցության ցանց (ՄՄՑ/ICN) կազմակերպությանը, 2013 թվականին շարունակել է մասնակցել վերջինիս աշխատանքային խմբերում իրականացվող աշխատանքներին, ինչը հնարավորություն է ընձեռում Հանձնաժողովին անմիջականորեն մասնակցել միջազգային տնտեսական մրցակցության ոլորտում ծագած խնդիրների լուծման գործընթացին, նպաստել Հայաստանի Հանրապետության մրցակցության օրենսդրության կիրարկման մեխանիզմների և միասնական տեսակետի ձևավորմանը, ինչպես նաև միջազգային հանրությանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետությունում մրցակցության ոլորտին առնչվող զարգացումներին: Մասնավորապես ՄՄՑ-ի հերթական՝ 12-րդ տարեկան համաժողովի աշխատանքներին մասնակցության շրջանակում Հանձնաժողովի ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել Մարոկկոյի, Մեքսիկայի, Պակիստանի մրցակցային մարմինների օդային փոխադրումների ոլորտի մասնագետների հետ: Արդյունքում, ելնելով նաև Համաշխարհային բանկի կողմից «Ջարգացման քաղաքականության նոր գործառնություն» ծրագրի մրցակցային քաղաքականության կիրարկման երկրի քաղաքականության գործողությունների դրույթներից՝ Հանձնաժողովն ավիացիայի ոլորտում թափանցիկության բարձրացման և մրցակցության բարելավմանն ուղղված դրույթների շրջանակում Համաշխարհային բանկի փորձագետների հետ համատեղ ուսումնասիրություն է իրականացրել ավիացիայի շուկայում:

Հանձնաժողովը հաշվետու տարում շարունակել է մասնակցել ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (ՀՔՄԽ/MCAN) տարեկան նիստերին և հանդիպումներին, որոնց ընթացքում քննարկվել են անդամ պետություններում դեղերի շուկայում կատարված համատեղ ուսումնասիրությունների և այդ շուկաներում առկա մրցակցային իրավիճակի վերաբերյալ հարցեր, ինչպես նաև ԱՊՀ անդամ պետություններում գովազդի ոլորտի արդի խնդիրներ:

Հանձնաժողովը, հաշվի առնելով ԵՄ-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրի «Մրցակցային քաղաքականության» ներքո նախանշված պետական օժանդակության համակարգի հիմնադրման և օրենսդրության համապատասխանեցման հանձնառությունը, շարունակել է 2013 թվականի առաջին կիսամյակում իրականացնել «Մրցակցային և պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում» թվինինգ ծրագիրը (այսուհետ՝ Թվինինգ ծրագիր): Հարկ է նշել, որ Թվինինգ ծրագրի ԵՄ գործընկեր անդամ պետություններն են Գերմանիան և Լիտվան:

Թվինինգ ծրագրի շրջանակներում 2013 թվականին Հանձնաժողովի, շահագրգիռ պետական մարմինների աշխատակիցների և գործարար շրջանակի ներկայացուցիչների մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվել են հակամրցակցային համաձայնությունների բացահայտմանը, գերիշխող դիրքի չարաշահմանն ու պետական օժանդակությանն առնչվող քննարկումներ, ինչպես նաև կլոր սեղան ձևաչափով արտագնա սեմինար՝ զանգվածային լրատվամիջոցների, քաղաքային համայնքների և մարզպետարանների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Թվինինգ ծրագրի եվրոպական փորձագետներն աջակցել են մշակելու և ներկայացնելու առաջարկություն պետական գնումների ոլորտում բողոքարկման գործընթացները բարելավելու վերաբերյալ: Թվինինգ ծրագրի փորձագետներն

աջակցել են նաև օդային տրանսպորտի բնագավառում մրցակցության ազդեցության գնահատման զեկույցի նախագծի նախապատրաստմանը:

Թվինինգ ծրագրի փակման համաժողովը կայացել է 2013 թվականի մարտին: Եվրոպական անկախ փորձագետների կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում Թվինինգ ծրագիրը գնահատվել է դրական:

Հանձնաժողովը Գերմանիայի միջազգային համագործակցության (ԳՄՀ/GIZ) ընկերության հետ, «Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում» ծրագրի ներքո, շարունակել է համագործակցությունը մրցակցության քաղաքականության կիրարկման բարելավմանն ուղղված համատեղ գործողությունների ծրագիր իրականացնելու առումով, որի հիմնական ուղղություններն են՝ գործերի վարման շուրջ միջազգային փորձագետի խորհրդատվությունը, Հայաստանի Հանրապետությունում մրցակցության քաղաքականության մասին տեղեկացվածության բարձրացումը, ոլորտային կարգավորողների միջև համագործակցության համապատասխանեցումը Եվրամիության չափանիշներին, Հանձնաժողովի աշխատակիցների համար դասընթացների կազմակերպումը, ինչպես նաև Գերմանիայի Դաշնության կարտելային գրասենյակի (Բունդեսկարտելամտ) մասնագետների միջև փորձի փոխանակումը: Հաշվի առնելով տարածաշրջանում Հանձնաժողովի առաջատար փորձը՝ ԳՄՀ-ի հետ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի ներկայացուցիչները հրավիրվել են զեկույցով հանդես գալու Վրաստանի Թբիլիսի քաղաքում կազմակերպվող տարածաշրջանային աշխատաժողովին և ներկայացնելու Հանձնաժողովի գործունեությունը՝ որպես լավագույն փորձ:

ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի (ՄԱԱԶՀ/UNCTAD) հետ համագործակցության շրջանակում Հանձնաժողով է այցելել ՄԱԱԶՀ-ի զուգահեռ ներկրման գծով փորձագետը: Վերջինիս հետ քննարկվել են զուգահեռ ներկրման ընթացքում առաջացող՝ մրցակցությունը սահմանափակող հնարավոր խոչընդոտներին առնչվող հարցեր:

Հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում շարունակել է համագործակցել Համաշխարհային բանկի (ՀԲ/ՄԵ) հետ «Ձարգացման քաղաքականության նոր գործառնություն» ծրագրի մրցակցային քաղաքականության կիրարկման երկրի քաղաքականության գործողությունների շրջանակում:

Համագործակցության ընթացքում տեղի են ունեցել մի շարք աուդիո և վիդեո հանդիպումներ ՀԲ-ի փորձագետների և մրցակցային խմբի մասնագետների հետ, աշխատանքներ են իրականացվել ենթաօրենսդրական ակտերի (միաձուլումների և պատասխանատվության միջոցների շեմերի վերաբերյալ) նախագծերի մշակման, մանրաձախ առևտրի և ավիացիայի շուկաներում իրականացվող ուսումնասիրությունների ուղղությամբ:

Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ/USAID) համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը բանակցություններ է վարել համատեղ գործողությունների ծրագրի մշակման և տեխնիկական աջակցության տրամադրման ուղղությամբ: Մասնավորապես Հանձնաժողովն իր ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, հասարակական և այլ շահագրգիռ կողմերի հետ հետադարձ կապը բարելավելու, տնտեսվարող սուբյեկտներից ստացված բողոքների, դիմումների արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեությունն ավելի հրապարակային

և թափանցիկ դարձնելու նպատակով 2013 թվականի մարտից ԱՄՆ ՄՁԳ-ի հետ համագործակցության նոր ծրագիր է սկսել:

Ծրագրի իրագործման ընթացքում աշխատանքներ են իրականացվել Հանձնաժողովի ինտերնետային կայքի (www.competition.am) որոշակի փոփոխությունների իրականացման և տեխնիկական խնդիրների հնարավոր լուծման ուղղությամբ: Մշակվել են էլեկտրոնային փաստաթղթերի ձևանմուշներ, ինչը հնարավորություն կընձեռի տնտեսվարող սուբյեկտներին և սպառողներին առցանց տեղեկատվություն և դիմում-բողոքներ ներկայացնել Հանձնաժողով: Աշխատանքներ են իրականացվել ԱՄՆ ՄՁԳ-ի փորձագետների հետ համատեղ մշակված առկա «Գրանցումների ավտոմատացված կառավարման համակարգ»-ի ծրագրի ընդլայնման և վերջինիս գործարկման ընթացքում առաջացած տեխնիկական խնդիրների շտկման ուղղությամբ, ինչպես նաև կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ Հանձնաժողովի աշխատակազմի համապատասխան աշխատակիցների համար:

Հանձնաժողովի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների բարձրացման նպատակով ԱՄՆ ՄՁԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրի (ՁՇՇՄ/EDMC) շրջանակում կազմակերպվել է գերիշխող դիրքի չարաշահման, ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանների որոշման վերաբերյալ «ուսուցում աշխատավայրում» ձևաչափով քննարկում՝ մրցակցության հարցերով միջազգային փորձագետի մասնակցությամբ: Քննարկման ընթացքում ներկայացվել է նաև փորձագետի կողմից մշակված «Շուկայի սահմանման և շուկայական իշխանության մասին» ուղեցույցի և «Գերիշխող դիրքի որոշման և չարաշահումների հայտնաբերման մասին» կարգի նախագծերը: Հանձնաժողովը 2013 թվականի մարտից մինչև 2013 թվականի հոկտեմբեր ամիսները ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակով համատեղ ծրագիր է իրականացրել ԱՄՆ ՄՁԳ-ի և ԱՄՆ առևտրի դաշնային հանձնաժողովի (ԱՄՆ ԱԴՀ/US FTC) հետ: Ծրագրի իրագործման ընթացքում իրավական հարցերով մշտական խորհրդատուն խորհրդատվություն է տրամադրել մի շարք ապրանքային շուկաների, օդային փոխադրումների ոլորտում ազատականացման, պետական գնումների ոլորտում միջազգային փորձի և մրցակցային օրենսդրության, այդ թվում նաև սպառողների շահերի պաշտպանության խնդիրների, ինչպես նաև դատարանում մրցակցային մարմինների որոշումների վերանայման մեխանիզմների վերաբերյալ: Ծրագրի շրջանակներում Հանձնաժողով է այցելել ԱՄՆ ԱԴՀ-ի սպառողների շահերի պաշտպանության գծով փորձագետը: Կազմակերպվել են մի շարք հանդիպումներ և քննարկումներ, մշակվել են զեկույցներ՝ Հանձնաժողովի գործունեության բարելավման վերաբերյալ:

Օտարերկրյա բիզնես գործունեությունը խթանելու նպատակով Հանձնաժողովը Հայաստանում Ամերիկայի առևտրային պալատի հետ համատեղ 2013 թվականի մարտին ՀԲ-ի երևանյան գրասենյակում կազմակերպել է «Առկա մրցակցային խնդիրները» թեմայով կլոր սեղան ձևաչափով հանդիպում՝ գործարարների հետ: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել պարբերաբար կազմակերպել նմանատիպ հանդիպում-քննարկումներ, որոնք հետագայում հիմք են հանդիսացել Հանձնաժողովի կողմից ուսումնասիրություններ իրականացնելու և վարույթներ հարուցելու համար:

Համաձայն Հանձնաժողովի և Հայաստանում Ամերիկայի առևտրային պալատի հետ համատեղ կազմակերպված գործարարների հետ հանդիպման ընթացքում ձեռք

բերված պայմանավորվածության՝ 2013 թվականի սեպտեմբերին «Մայքրոսոֆթ» ընկերության հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ կազմակերպվել է պետական մարմինների հետ աշխատելու մեխանիզմների և արտոնագրված ծրագրային ապահովման տարբերակման նշանների վերաբերյալ վերապատրաստման դասընթաց, իսկ 2013 թվականի նոյեմբերին կազմակերպվել է սեմինար քննարկում Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հանձնաժողովի աշխատակիցների մասնակցությամբ՝ հենական ծրագրերի տարբերակման վերաբերյալ:

Հանձնաժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (ԼՂՀ ՀՏՄԿՊՀ) համագործակցության շրջանակում ԼՂՀ ՀՏՄԿՊՀ-ի աշխատակիցները փորձի փոխանակման նպատակով հրավիրվել և մասնակցել են Հանձնաժողովի կողմից կազմակերպվող սեմինարներին, քննարկումներին և այլ միջոցառումներին: Պարբերաբար իրականացվել են այցեր ԼՂՀ ՀՏՄԿՊՀ համատեղ ուսումնասիրություններ, վարույթներ, դիտանցումներ և ստուգումներ իրականացնելու նպատակով: Հանձնաժողովն աջակցել է նաև ԼՂՀ ՀՏՄԿՊՀ-ի պաշտոնական ինտերնետային կայքի (www.kargavorum.nkr.am) նախագծման և մշակման հարցում:

Հանձնաժողովն ակտիվորեն մասնակցել է նաև միջազգային համաժողովներին, սեմինարներին, ամրապնդել է այլ երկրների համանման կառույցների հետ համագործակցությունը՝ մրցակցության զարգացմանը խոչընդոտող արդի խնդիրների քննարկման և միջազգային չափորոշիչներին համապատասխան մոտեցումներ որդեգրելու նպատակով: Հանձնաժողովի ներկայացուցիչները 2013 թվականի ընթացքում մասնակցել են միջազգային տարբեր միջոցառումներին:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ աշխատանքներ են տարվել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովման, գործարար միջավայրի բարելավման, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ուղղություններով: Այդ մասին են վկայում նաև Համաշխարհային տնտեսական ֆորում (ՀՏՖ/WEF) միջազգային կազմակերպության կողմից ներկայացված Համաշխարհային մրցունակության զեկույցում (Ջեկույց) տրված Հայաստանի Հանրապետության վարկանիշային գնահատականները:

Համաձայն 2013-2014 թվականների Ջեկույցի (համեմատվել են 148 երկիր)՝ Հայաստանի Հանրապետությունը, այս տարի ևս, 2012-2013 թվականների նկատմամբ (համեմատվել են 144 երկիր) բարելավվել է իր մրցունակության ցուցանիշը 3 կետով՝ զբաղեցնելով 79-րդ տեղը: Հարկ է նշել, որ 2013-2014 թվականների մրցակցության ոլորտին առնչվող երեք ցուցանիշների առումով արձանագրված առաջընթացն էական ազդեցություն է ունեցել Հայաստանի Հանրապետության մրցունակության ընդհանուր դիրքի բարելավման գործում:

Մասնավորապես Հայաստանի Հանրապետությունը **տեղական մրցակցության ուժգնության ցուցանիշով** բարելավվել է իր դիրքը 28 կետով՝ զբաղեցնելով 102-րդ տեղը և արձանագրելով մեծ առաջընթաց տարածաշրջանի երկրների համեմատ: Այսպես, Հայաստանից հետ են մնացել Ադրբեջանը՝ 26 կետով, Վրաստանը՝ 21 կետով: Հայաստանի նկատմամբ ԱՊՀ անդամ մյուս պետություններից հետ են մնացել Ղազախստանը՝ 18 կետով, Մոլդովան՝ 17 կետով, Ռուսաստանը՝ 11 կետով, Ուկրաինան՝ 4 կետով: Եվրոպական երկրներից Ռումինիան այս ցուցանիշով անկում է արձանագրել

և Հայաստանին իր դիրքով զիջել է 13 կետով:

Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը բարելավել է իր դիրքը 19 կետով՝ զբաղեցնելով 97-րդ տեղը: Այս ցուցանիշով ևս Հայաստանն արձանագրել է մեծ առաջընթաց տարածաշրջանի երկրների նկատմամբ: Այսպես, Հայաստանից հետ են մնում Վրաստանը՝ 41 կետով, Ադրբեջանը՝ 30 կետով: ԱՊՀ երկրներից Հայաստանն առաջ է գտնվում Ուկրաինայից՝ 40 կետով, Մոլդովայից՝ 36 կետով, Ռուսաստանից՝ 19 կետով: Արևելյան Եվրոպայի երկրներից Ռումինիան Հայաստանից հետ է մնացել 16 կետով:

Մրցակցության վրա շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների ազդեցության ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը բարելավել է իր դիրքը 15 կետով՝ զբաղեցնելով 75-րդ տեղը: Այս ցուցանիշով նույնպես Հայաստանն արձանագրել է մեծ առաջընթաց տարածաշրջանի երկրների նկատմամբ: Այսպես, Հայաստանից հետ են մնացել Վրաստանը՝ 44 կետով, Ադրբեջանը՝ 8 կետով: ԱՊՀ երկրներից Հայաստանն առաջ է գտնվում Մոլդովայից՝ 58 կետով, Ուկրաինայից՝ 57 կետով, Ռուսաստանից՝ 18 կետով, Ղազախստանից՝ 3 կետով: Հայաստանն առաջատար դիրք ունի Արևելյան Եվրոպայի երկրներից Սլովենիայի, Սլովակիայի, Ռումինիայի և Հունգարիայի նկատմամբ:

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն

Հանձնաժողովը, 2013 թվականի ընթացքում, ի թիվս այլ աշխատանքների, իրականացրել է մի շարք ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություններ՝ հիմք ընդունելով նախորդ տարվա ուսումնասիրությունների ժամանակ առաջացած խնդիրները, գերիշխող դիրքի վերանայման վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումները, գերիշխող դիրք ունեցող ընկերությունների լուծարվելու փաստերը և այլ հանգամանքներ:

Աղյուսակ 1

2013 թվականի ընթացքում ուսումնասիրված ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը և գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների թիվը

Հ/Հ	Ապրանքային շուկայի անվանումը	Ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների թիվը	Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը* և դրա բնութագրումը	
			5	6
1	2	4	5	6
1	«Ապխտած, ծխեցրած, չորացրած, մարինացված ձուկ և ձկան ֆիլե»	-	59,86	միջին
2	«Ձկան կեր»	2	84,91	բարձր
3	«Իշխան և կարմրախայտ ձկնատեսակներ»	1	54,85	միջին
4	«Թառափազգիներ»	2	76,11	բարձր
5	«Շաքարավազ»	1	99,8	բարձր
6	«Կենցաղում օգտագործվող վացքի մեքենաներ»	-	46,90	միջին
7	«Հեռուստացույց»	-	57,10	միջին
8	«Ճաշասենյակի կահույք» (ներկրում)	-	46,50	միջին
9	«Ննջասենյակի կահույք» (ներկրում)	-	41,50	ցածր
10	«Փափուկ կահույք» (ներկրում)	-	55,20	միջին
11	«Աթոռ» (ներկրում)	-	13,95	ցածր
12	«Շինարարական լաք» (ներկրում)	-	55,70	միջին
13	«Շինարարական ներկ» (ներկրում)	-	25,00	ցածր
14	«Սառնարաններ»	-	63,00	միջին
15	Քաղաքացիական և բնակարանային շինարարությունում օգտագործվող ապակի	2	62,40	միջին
16	«Գիպասատավարաթղթե սալեր»	2	66,25	միջին
17	«Փայտաթելային սալեր ԴՎՊ-ից»	3	91,56	բարձր
18	«Փայտաթելային սալեր ՄԴՖ-ից»	3	82,02	բարձր
19	«Պատի երեսպատման սալիկներ»	2	70,7	բարձր
20	«Լամինացված մանրահատակ»	-	38,86	ցածր
21	«Երեսպատման սալիկներ հատակի»	-	58,44	միջին
22	«Բիտում»	1	76,3	բարձր
23	«Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր»	3	67,4	միջին
24	«Բեռնատար ավտոմեքենաների համար նախատեսված նոր անվադողեր»	-	53,6	միջին

* Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան, եթե $70\% < CR-3 < 100\%$, միջին աստիճան՝ եթե $45\% < CR-3 < 70\%$, ցածր աստիճան՝ եթե $CR-3 < 45\%$: CR-3-ը տվյալ շուկայի իրացման ընդհանուր ծավալում առավել խոշոր երեք տնտեսվարող սուբյեկտների բաժինների գումարն է:

Հանձնաժողովի կողմից իրականացվել են մի շարք ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություններ, որոշվել և գնահատվել է ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը, դրանցում մասնակից տնտեսվարող սուբյեկտների թիվը, գերիշխող դիրքի առկայությունը (Աղյուսակ 1): Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 24 ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություններ՝ 5-ը պարենային, 19-ը՝ ոչ պարենային: Ուսումնասիրված 24 ապրանքային շուկաներից 7-ը բարձր կենտրոնացված են, 13-ը՝ միջին կենտրոնացված, 4-ը՝ ցածր կենտրոնացված: Ապրանքային շուկաներից 11-ում առկա է գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ, իսկ մյուս 13 ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ չկա: Ընդ որում, վերոնշյալ 11 ապրանքային շուկաներից 8-ում առկա են համատեղ գերիշխողներ, այդ թվում 5 ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտները գերիշխող դիրք ունեցող են համարվել՝ միասին գրավելով տվյալ ապրանքային շուկայի մեկ երկրորդը, իսկ մյուս 3 շուկաներում՝ միասին գրավելով տվյալ շուկայի երկու երրորդը:

«Ապխտած, ծխեցրած, չորացրած, մարինացված ձուկ և ձկան ֆիլե» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2012 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալների հիման վրա: «Ապխտած, ծխեցրած, չորացրած, մարինացված ձուկ և ձկան ֆիլե» ապրանքային շուկայում գործող թվով 12 տնտեսվարող սուբյեկտի կողմից ապխտած, ծխեցրած, չորացրած, մարինացված ձկան և ձկան ֆիլեի ներկրման ծավալները կազմել են 91644,9 կգ, արտադրության ծավալները՝ 7489,4 կգ, արտահանման ծավալները՝ 4710,5 կգ: Իրացման ծավալը 2012 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում կազմել է 68134,0 կգ:

«Ապխտած, ծխեցրած, չորացրած, մարինացված ձուկ և ձկան ֆիլե» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեն «Գրիգոր և Արաքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 23,13 տոկոս, «Ջոնարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 20,97 տոկոս և Ա/Ձ Սմբատ Սիմոնյան՝ 15,76 տոկոս: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան:

«Ձկան կեր» ապրանքային շուկայում գործող թվով 32 տնտեսվարող սուբյեկտի կողմից 2012 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ներկրվել է 7405,9 տոննա ձկան կեր: Շուկայի իրացման ծավալը կազմել է 3762,9 տոննա:

«Ձկան կեր» ապրանքային շուկայում 2012 թվականին հունվար-օգոստոս ամիսների ընթացքում իրացման ծավալներով առաջատար «Մխչյան ֆիշ ֆուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ու ««Սագատի» և «Սագատի ֆիշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ» անձանց խումբը «Ձկան կեր» ապրանքային շուկայում միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան մեկ երկրորդը (79,62 տոկոս):

Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

«Իշխան և կարմրախայտ ձկնատեսակներ» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2012 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալների հիման վրա: Նշված ժամանակահատվածում արտադրվել է 1832816,5 կգ, արտահանվել է 330660,0 կգ իշխան և կարմրախայտ ձկնատեսակներ: Շուկայի իրացման ծավալը 2012 թվականի նշված ժամանակահատվածում կազմել է 871270,6 կգ իշխան և կարմրախայտ ձկնատեսակներ:

«Իշխան և կարմրախայտ ձկնատեսակներ» ապրանքային շուկայում գործող 99 տնտեսվարող սուբյեկտներից իրացման առավել մեծ ծավալներ ունեն «Յունիֆիշ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 47,12 տոկոս, «Սպիտակ դելֆին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 4,24 տոկոս և «Ակվատեխավտոմատիկա» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 3,49 տոկոս բաժիններով: «Իշխան և կարմրախայտ ձկնատեսակներ» ապրանքային շուկայում «Յունիֆիշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն իրացման ծավալներով գրավում է տվյալ շուկայի ավելի քան մեկ երրորդը և համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան:

«Թառափազգիներ» ապրանքային շուկայի արտադրության ծավալը 2012 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում կազմել է 1696055,6 կգ, արտահանման ծավալը՝ 532329,0 կգ: Հայաստանի Հանրապետությունում իրացման ընդհանուր ծավալը 2012 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում կազմել է 614919,9 կգ թառափազգիներ:

Իրացման ծավալներով առաջատար են «Յունիֆիշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 49,23 տոկոս և «Մասիս-ձուկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 19,31 տոկոս բաժիններով, որոնք «Թառափազգիներ» ապրանքային շուկայում միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան մեկ երկրորդը (68,54 տոկոս) և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

«Շաքարավազ» ապրանքային շուկայում 2013 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում «Ալեքս Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ներմուծել է շաքարավազի հումք, իսկ պատրաստի շաքարավազի ներմուծում է իրականացրել թվով 25 կազմակերպություն, որոնց ներմուծման ընդհանուրն ծավալը կազմել է 1603,3 տոննա: Այդ ընկերություններից ըստ ներմուծման ծավալների առաջատար երեք տնտեսվարող սուբյեկտներն են հանդիսանում «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 1470 տոննա, «Արտաշատի Պահածոների Գործարան» բաց բաժնետիրական ընկերությունը՝ 63,7 տոննա, «Պեպսի-Կոլա Բոթլեր Ջերմուկ Ինթերնեյշնլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 50 տոննա: Ընդ որում՝ վերջիններս «Շաքարավազ» ապրանքային շուկայի մասնակիցներ չեն համարվում և նրանց կողմից ստացված պաշտոնական տվյալների համաձայն 2013 թվականի առաջին եռամսյակում ներմուծված շաքարավազը չի իրացվել, այլ օգտագործվել է սեփական կարիքների համար:

Նշված ժամանակահատվածում «Ալեքս Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը արտադրել է 22 425,4 տոննա շաքարավազ:

Ըստ 2013 թվականի առաջին եռամսյակի տվյալների, «Ալեքս Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում իրացվել է 12 142,5 տոննա, շուկայի մասնակից մնացած 21 տնտեսվարող սուբյեկտների կողմից՝ 19,6 տոննա շաքարավազ: Այսպիսով, շուկայի ընդհանուր իրացման ծավալը կազմել է 12 162,1 տոննա շաքարավազ, որի 99,8 տոկոսը բաժին է ընկնում «Ալեքս Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և Հանձնաժողովի որոշմամբ վերջինս համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

«Կենցաղում օգտագործվող լվացքի մեքենաներ» ապրանքային շուկայում գործող 54 տնտեսվարող սուբյեկտի կողմից 2012 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներկրվել է 68805 հատ կենցաղում օգտագործվող լվացքի

մեքենաներ: Այդ նույն ժամանակահատվածում իրացման ընդհանուր ծավալը կազմել է 78092 հատ:

Իրացման ծավալներով առաջատար երեք տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Հեսել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 24,90 տոկոս, «Վիելվի սենթեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 11,90 տոկոս և «Փրիթի Ուեյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 10,10 տոկոս բաժիններով: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան:

«**Հեռուստացույց**» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2012 թվականի տվյալների հիման վրա:

Տվյալ ապրանքային շուկայում գործող 77 տնտեսվարող սուբյեկտների կողմից 2012 թվականի ընթացքում ներկրվել են 23262 հեռուստացույց: Հայաստանի Հանրապետությունում իրացման ընդհանուր ծավալը կազմել է 33825 հեռուստացույց:

Իրացման ծավալներով առաջատար են «Վիելվի սենթեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 24,30 տոկոս, «Արայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 22,10 տոկոս և «Փրիթի Ուեյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 10,70 տոկոս բաժիններով:

«Հեռուստացույց» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան:

«**Ճաշասենյակի կահույք**» ապրանքային շուկայում 2012 թվականի ընթացքում 41 տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 1839 կոմպլեկտ ճաշասենյակի կահույք: Շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների իրացման ընդհանուր ծավալը կազմել է 2256 կոմպլեկտ:

«Ճաշասենյակի կահույք» ապրանքային շուկայում իրացման ծավալներով առաջատար երեք սուբյեկտներն են՝ «Վալենսիա» ՀԶ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 27,70 տոկոս, «Գուգարտ կահույք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 11,70 տոկոս, «Կոալա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 7,10 տոկոս բաժիններով: Շուկան միջին կենտրոնացված է:

«**Ննջասենյակի կահույք**» ապրանքային շուկայում 2012 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 3160 կոմպլեկտ ննջասենյակի կահույք: Տվյալ շուկայում մասնակիցների թիվը կազմում է 52 սուբյեկտ, որոնց իրացման ծավալը կազմել է 3544 կոմպլեկտ:

Իրացման ծավալներով առաջատար են «Գուգարտ կահույք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 18,50 տոկոս, «Եվրոպա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 14,10 տոկոս և «Վալենսիա» ՀԶ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 8,90 տոկոս բաժիններով:

«Ննջասենյակի կահույք» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության ցածր աստիճան:

«**Փափուկ կահույք**» ապրանքային շուկայում 2012 թվականի ընթացքում թվով 101 տնտեսվարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 2035 կոմպլեկտ փափուկ կահույք: Նույն ժամանակահատվածում իրացման ծավալը կազմել է 4780 կոմպլեկտ:

«Փափուկ կահույք» ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Վալենսիա» ՀԶ սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերությունը՝ 36,10 տոկոս, «Գուգարտ կահույք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 14,00 տոկոս և «Եվրոպա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 5,10 տոկոս բաժիններով: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան:

«Աթոռ» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2012 թվականի տվյալների հիման վրա: «Աթոռ» ապրանքային շուկայում 2012 թվականի ընթացքում 952 տնտեսվարող սուբյեկտների կողմից ներմուծման ծավալը կազմել է 234008 աթոռ: Այդ ժամանակահատվածում իրացման ընդհանուր ծավալը կազմել է 171961 հատ:

Իրացման ծավալներով առաջատար են «Գուգարտ կահույք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 5,51 տոկոս, «Վալենսիա» ՀՁ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 4,84 տոկոս և «ԷյԷմԷՖ բրենչ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 3,60 տոկոս բաժիններով: Շուկան ունի կենտրոնացվածության ցածր աստիճան:

«Շինարարական լաք» ապրանքային շուկայում 86 տնտեսվարող սուբյեկտների կողմից 2012 թվականին շինարարական լաքի ներմուծման ծավալը կազմել է 636 427,8 տոննա, իսկ 2012 թվականին Հայաստանի Հանրապետությունում իրացվել է 368 230 տոննա շինարարական լաք, որի 55,7 տոկոսը բաժին է հասել «Ժվ ընդ Ա» և «ԷսԳա-Կե» և «Պրոֆի Ֆուլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան:

«Շինարարական ներկ» ապրանքային շուկայում 126 տնտեսվարողների կողմից 2012 թվականին ներմուծման ծավալը կազմել է 689 356,1 կգ, իսկ իրացման ծավալը կազմել է 1 286 682 կգ շինարարական ներկ, որի 25 տոկոսը բաժին է հասել առաջատար դիրք ունեցող երեք՝ «Բարսիս», «Ռուբեն և եղբայրներ» և «Պրոֆի Ֆուլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին:

Այսպիսով, ստացված տվյալներից պարզվել է, որ շինարարական ներկի ներմուծման և իրացման ոլորտը մրցակցային է, իսկ կենտրոնացվածությունը՝ ցածր:

«Սառնարաններ» ապրանքային շուկայում գործող 95 տնտեսվարող սուբյեկտների ընդհանուր իրացման ծավալը 2012 թվականի ընթացքում կազմել է 65082 հատ: Այդ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 56905 սառնարան:

Իրացման ծավալներով առաջատար են «ՎիելՎի սենթեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 31,70 տոկոս, «Հեսել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 15,70 տոկոս և «Փրիթի Ուեյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 15,60 տոկոս: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան:

«Քաղաքացիական և բնակարանային շինարարությունում օգտագործվող ապակի» ապրանքային շուկայում գործող 42 տնտեսվարող սուբյեկտների ներմուծման ծավալը 2012 թվականի ընթացքում կազմել է 1899,0 հազ.քմ, իսկ իրացման ծավալը՝ 1599,1 հազ.քմ:

«Քաղաքացիական և բնակարանային շինարարությունում օգտագործվող ապակի» ապրանքային շուկայում 2012 թվականի ընթացքում իրացման ծավալներով առաջատար երկու տնտեսվարող սուբյեկտները՝ «Ֆուրնիվուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 40,41 տոկոս և «ԱՍԷԴԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 12,73 տոկոս իրացման ծավալներով միասին

գրավում են տվյալ ապրանքային շուկայի ավելի քան մեկ երկրորդը (53,14 տոկոս) և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան:

«Գիպսաստվարաթղթե սալեր» ապրանքային շուկայում գործող 27 տնտեսվարող սուբյեկտների ներմուծման ծավալը 2012 թվականի ընթացքում կազմել է 2365,1 հազ.քմ գիպսաստվարաթղթե սալեր: Նույն ժամանակահատվածում իրացման ծավալը Հայաստանի Հանրապետությունում կազմել է 1852,7 հազ.քմ:

«Գիպսաստվարաթղթե սալեր» ապրանքային շուկայում 2012 թվականի ընթացքում իրացման ծավալներով առաջատար են՝ «Իմէքս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 37,05 տոկոս, «Լիա-Կ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 22,90 տոկոս և «Կոնֆորտ Ռ&Վ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 6,30 տոկոս բաժիններով: «Իմէքս Գրուպ» և «Լիա-Կ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններն իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ ապրանքային շուկայի ավելի քան մեկ երկրորդը (59,95 տոկոս) և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան:

«Փայտաթելային սալեր ԴՎՊ-ից» ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների իրացման ծավալը 2012 թվականի ընթացքում կազմել է 1109,1 հազ.քմ: Հայաստանի Հանրապետություն նշված ժամանակահատվածում 14 տնտեսվարող սուբյեկտների ներմուծման ծավալը կազմել է 989,4 հազ.քմ:

«Փայտաթելային սալեր ԴՎՊ-ից» ապրանքային շուկայում իրացման ծավալներով առաջատար են՝ «Ֆուրնիվուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 38,67 տոկոս, «Մի ընդ Գա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 27,55 տոկոս և «Առևտրի տուն Բելվր» փակ բաժնետիրական ընկերությունը՝ 25,34 տոկոս բաժիններով: Վերջիններս իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ ապրանքային շուկայի առնվազն երկու երրորդը և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

«Փայտաթելային սալեր ՄԴՖ-ից» ապրանքային շուկայում իրականացրած ուսումնասիրության համաձայն 2012 թվականին թվով 15 տնտեսվարող սուբյեկտների կողմից ներմուծման ծավալը կազմել է 374,3 հազ.քմ, իսկ իրացման ծավալը նույն ժամանակահատվածում կազմել է 776,9 հազ.քմ:

«Փայտաթելային սալեր ՄԴՖ-ից» ապրանքային շուկայում իրացման ծավալներով երեք առաջատար տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Իմէքս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 27,52 տոկոս, «Մի ընդ Գա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 27,33 տոկոս և «Ֆուրնիվուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 27,17 տոկոս բաժիններով միասին գրավում են տվյալ ապրանքային շուկայի առնվազն երկու երրորդը (82,02 տոկոս) և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

«Պատի երեսպատման սալիկներ» ապրանքային շուկայում գործող 63 տնտեսվարող սուբյեկտների իրացման ծավալը 2012 թվականի ընթացքում կազմել է 995,5 հազ.քմ: Նույն թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ներմուծման ծավալը կազմել է 628,2 հազ.քմ:

«Պատի երեսպատման սալիկներ» ապրանքային շուկայում իրացման ծավալներով առավել խոշոր ընկերություններն են՝ «Իմէքս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 37,70 տոկոս, «Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 26,34 տոկոս և «Սաքո և Արարատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 6,66 տոկոս բաժիններով: «Իմէքս Գրուպ» և «Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններն իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ ապրանքային շուկայի ավելի քան մեկ երկրորդը (64,04 տոկոս) և նրանցից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

«Լամինացված մանրահատակ» ապրանքային շուկայում 2012 թվականին գործող 70 տնտեսվարող սուբյեկտների իրացման ծավալը կազմել է 591,5 հազ.քմ:

«Լամինացված մանրահատակ» ապրանքային շուկայում 2012 թվականի ընթացքում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներն են՝ «Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 24,20 տոկոս, «Կասգզա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 10,58 տոկոս «Սամոջախ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 4,08 տոկոս բաժիններով: Շուկան ունի կենտրոնացվածության ցածր աստիճան:

«Երեսպատման սալիկներ հատակի» ապրանքային շուկայում 2012 թվականի տվյալներով Հայաստանի Հանրապետություն 85 տնտեսվարող սուբյեկտների կողմից ներմուծման ծավալը կազմել է 1173,59 հազ.քմ, իսկ իրացման ծավալը կազմել է 1390,50 հազ.քմ:

«Երեսպատման սալիկներ հատակի» ապրանքային շուկայում 2012 թվականի ընթացքում իրացման ծավալներով առավել խոշոր ընկերություններն են՝ «Իմէքս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 31,00 տոկոս, «Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 17,81 տոկոս և «Սաքո և Արարատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 9,63 տոկոս բաժիններով: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան:

«Բիտում» ապրանքային շուկայում 2012 թվականի տվյալներով 31 տնտեսվարող սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետությունում ներմուծման ծավալը կազմել է 35909 տոննա, իսկ իրացման ծավալը նշված ժամանակահատվածում՝ 34046 տոննա:

«Բիտում» ապրանքային շուկայում 2012 թվականի ընթացքում իրացման ծավալներով առավել խոշոր ընկերություններն են՝ «Բարսել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 69,8 տոկոս, «Ժիրարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 4,3 տոկոս և «ԱրարատՃանշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 2,2 տոկոս բաժիններով: «Բարսել» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն իրացման ծավալով գրավում է տվյալ ապրանքային շուկայի ավելի քան մեկ երրորդը և Հանձնաժողովի որոշմամբ «Բիտում» ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

«Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2013 թվականի հունվարի 1-ից օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածի տվյալների հիման վրա: «Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր» ապրանքային շուկայում 53 տնտեսվարող սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետություն է ներկրվել մարդատար

ավտոմեքենաների 227991 հատ նոր անվադողեր, իսկ իրացման ծավալը կազմել է 178791 հատ:

«Մարդատար ավտոմեքենաների նոր անվադողեր» ապրանքային շուկայում իրացման ծավալներով առավել խոշոր ընկերություններն են՝ «Ար-Բե հայ բելառուսական առևտրի տուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 36,4 տոկոս, «Բելռոս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 19,9 տոկոս և «Արպանիվ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 11,1 տոկոս բաժիններով: Նշված երեք տնտեսվարող սուբյեկտներն իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի ավելի քան երկու երրորդը և յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան:


«Բեռնատար ավտոմեքենաների համար նախատեսված նոր անվադողեր» ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2013 թվականի հունվարի 1-ից օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Թվով 46 տնտեսվարող սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծման ծավալը կազմել է 37285 հատ, իսկ իրացման ծավալը՝ 42855 հատ բեռնատար ավտոմեքենաների նոր անվադողեր:

Իրացման ծավալներով առաջատար են «Արպանիվ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 25,2 տոկոս, «Բելռոս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 15,7 տոկոս և «Վարան Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 12,7 տոկոս բաժիններով: Շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից 2013 թվականի ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ապրանքային շուկաների կեսից ավելին ունեն միջին կենտրոնացվածություն:

Գծապատկեր 1

Հանձնաժողովի կողմից 2013 թվականի ընթացքում ուսումնասիրված ապրանքային շուկաների կենտրոնացվածության մակարդակները



Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումներ

Ապրանքային շուկաների մրցակցային իրավիճակի վրա իր դրական ազդեցությունն է ունեցել Հանձնաժողովի կողմից իրականացվող տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային համաձայնությունների, անբարեխիղճ մրցակցության դեպքերի հայտնաբերմանն ուղղված ակտիվ և նպատակաուղղված գործողությունները և դրանց արդյունքների հրապարակայնացումը: Նշված ուղղություններով իրականացվող աշխատանքները նպաստում են ազատ մրցակցային միջավայրի ձևավորմանը:

Վերջին տարիներին Հանձնաժողովն ակտիվ ուսումնասիրություններ է իրականացրել հակամրցակցային համաձայնությունների և մրցակցությունը սահմանափակող այլ գործողությունների բացահայտման ուղղությամբ, անց է կացրել բազմաթիվ վարույթներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով պետական գնումների ոլորտի հնարավոր հակամրցակցային խնդիրներին:

Այսպես, Հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում իրականացրել է մի շարք ուսումնասիրություններ պետական գնումների ոլորտում: Մասնավորապես ուսումնասիրվել են սոցիալական ոլորտում գործող շուրջ 88 հաստատության կողմից (ծերանոց, մանկատուն, գիշերօթիկ հաստատություն, մանկապարտեզ և այլն) սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված շուրջ 200 գնման ընթացակարգ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ սննդամթերքի ձեռքբերման մրցույթներում, որոնց մասնակցել են շուրջ 35 տնտեսվարող սուբյեկտներ, 8 տնտեսվարող սուբյեկտների վարքագծում առկա են մրցակցության օրենսդրության խախտումների մասին վկայող հանգամանքներ: Հանձնաժողովը բացահայտել է, որ ընկերությունները գնման ընթացակարգերի շրջանակներում վարել են համատեղ փոխհամաձայնեցված քաղաքականություն՝ հայտնաբերելով այդ մասին վկայող մի շարք հանգամանքներ: Այսպես, հայտարարված գնման ընթացակարգի մասնակիցների միջև հաղթողի վերաբերյալ նախապես ձեռք է բերվել պայմանավորվածություն: Միևնույն կազմակերպությունը, հաղթող ճանաչվելով մեկ գնման ընթացակարգում, պարտվել է մեկ ուրիշում՝ նույն ապրանքների գծով ներկայացնելով ավելի բարձր գնային առաջարկ, որպեսզի հաղթող ճանաչվի իր հետ փոխկապակցված ընկերությունը: Որոշ դեպքերում էլ ընկերություններից մեկը, հաղթող ճանաչվելով գնման ընթացակարգում, հրաժարվել է ներկայացնել համապատասխան փաստաթղթերը և մատակարարել ապրանքները: Արդյունքում տեղը զիջել է իր հետ փոխկապակցված և ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած մյուս ընկերությանը: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ բազմաթիվ ապրանքների գնման ընթացակարգերի շրջանակներում ներկայացված գները գերազանցել են վերջիններիս շուկայական գները: Վերոնշյալ գործողությունները Հանձնաժողովի կողմից որակվել են որպես հակամրցակցային համաձայնություն, որոնց արդյունքում տեղի են ունեցել մրցակցության սահմանափակում: Տնտեսվարող սուբյեկտներից 5-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց է կիրառվել նախազգուշացումը: Մյուս 3 տնտեսվարող սուբյեկտների, մասնավորապես՝ «Երեքնուկ», «Ամարաս Յուս» և «Սեար Գրուպ» ընկերությունների նկատմամբ նշանակվել է տուգանք՝ յուրաքանչյուրի նկատմամբ 15 մլն դրամի չափով, քանի որ վերջիններս նախկինում ևս թույլ են տվել մրցակցային օրենսդրության խախտումներ և հայտնվել Հանձնաժողովի տեսադաշտում:

Տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքը, հիմնականում, բերում է այնպիսի խախտումների, ինչպիսիք են գների չհիմնավորված բարձրացում, շուկայի մուտքի խոչընդոտների ստեղծում կամ շուկայից դուրս մղում, կամ առանձին տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ տարբերակված մոտեցում և այլն: Հանձնաժողովը 2013 թվականին համապատասխան դիմումի հիման վրա ուսումնասիրություն է իրականացրել էնտերալ զոնդային սննդի շրջանառության ոլորտում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտների համար շուկա մուտքի խոչընդոտներ ստեղծելու առնչությամբ: Մասնավորապես պետական գնումների շրջանակում էնտերալ զոնդային սննդի համար հայտարարված գնման ընթացակարգում վերջինս ներկայացրել է ավելի ցածր գին այն չափաբաժինների համար, որոնցով ունեցել է մրցակից (այդ հանգամանքը հիմնավորելով իր օտարերկրյա մատակարարի կողմից զեղչերի տրամադրմամբ), իսկ այն չափաբաժնի համար, որի գծով չի մրցակցել այլ ընկերությունների հետ, հակառակը՝ էապես բարձր գին: Բացի այդ, ընկերությունն էնտերալ զոնդային սննդի ձեռք բերման գնի նվազմանը համարժեք չի իջեցրել դրա մանրածախ վաճառքի գները:

Հանձնաժողովը «Կուրացիո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործողությունները և վարքագիծն «էնտերալ զոնդային սնունդ» ապրանքային շուկայում համարել է գերիշխող դիրքի չարաշահում և կիրառել պատասխանատվության միջոց: Հանձնաժողովի որոշման արդյունքում ընկերությունը, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, ընդգրկվել է այն տնտեսվարող սուբյեկտների ցանկում, որոնք իրավունք չունեն մասնակցելու գնումների գործընթացին 6 ամսից մինչև 1 տարի ժամկետով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական գնումների ոլորտում մշտապես առկա են հակամրցակցային համաձայնությունների, գերիշխող դիրքի չարաշահումների և Օրենքի այլ խախտումների, ինչպես նաև բյուջեից տրամադրվող միջոցների ոչ արդյունավետ օգտագործման ռիսկեր, Հանձնաժողովը շարունակելու է առանձնահատուկ ուշադրությամբ հետևողական լինել այս ոլորտում մրցակցությունը սահմանափակող դրսևորումներին և համապատասխան աշխատանքներ իրականացնել դրանց կանխարգելման ուղղությամբ:

Հանձնաժողովը մի շարք ընկերությունների կողմից ներկայացված բողոքների հիման վրա, դեղերի շրջանառության ոլորտում իրականացրել է ուսումնասիրություն՝ պարզելու դեղերի ներմուծման և գրանցման գործընթացներում Օրենքի հնարավոր խախտումների և մրցակցությունը սահմանափակող դրսևորումների առկայությունը: Բողոքները վերաբերել են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և վերջինիս ենթակայությամբ գործող «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից դեղերի գրանցման մերժումներին, որոնք ըստ տնտեսվարող սուբյեկտների խոչընդոտներ են ստեղծել դեղերի շրջանառության ոլորտում գործունեություն ծավալելու առումով:

Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթների արդյունքում իրականացվել է բազմակողմանի ուսումնասիրություն, հրավիրվել են միջազգային փորձագետներ, և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կազմակերպվել են մի շարք քննարկումներ:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եզրակացրել է, որ արձանագրված խնդիրներն առավելապես պայմանավորված են եղել դեղերի ներմուծման և գրանցման գործընթացները կարգավորող իրավական ակտերի

անկատարությամբ, անհստակությամբ և անորոշությամբ, ինչը հանգեցրել է դրանց տարաբնույթ մեկնաբանմանը և կիրառման հետևանքների անկանխատեսելիությանը:

Չնայած այն հանգամանքին, որ ուսումնասիրության արդյունքում Օրենքի խախտման փաստեր չեն հայտնաբերվել, այնուամենայնիվ, հաշվի առնելով ոլորտի կարևոր սոցիալական նշանակությունը, Հանձնաժողովի կողմից համապատասխան լիազոր մարմիններին ներկայացվել են օրենսդրական փոփոխություններ իրականացնելու առաջարկություններ: Մասնավորապես, հաշվի առնելով դեղերի շրջանառության կարգավորման միջազգային փորձը, առաջարկվել է Հայաստանի Հանրապետությունում ներդնել դեղերի զուգահեռ ներմուծման ընթացակարգը, ինչը կարող է էապես նպաստել այս ոլորտում ապրանքների ազատ շրջանառությանը, շուկաները բաժանելու հնարավորության կանխարգելմանը, ինչպես նաև՝ գների էական նվազեցմանը:

Հանձնաժողովի կողմից մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ շարունակական հսկողությունը թույլ է տվել հայտնաբերել և կանխարգելել մենաշնորհ և գերիշխող դիրքի չարաշահումները, մասնավորապես, երբ վերջիններիս կողմից ծառայությունները տրամադրվում են ոչ բավարար՝ ստեղծելով սպառողների համար խոչընդոտներ:

Այսպես, Հանձնաժողովն ուսումնասիրություններ է իրականացրել ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների ոլորտում: Մասնավորապես քաղաքացիները բողոքել են, որ «ԱրմենՏել» ընկերության ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների բաժանորդները, երբ արգելափակում են միջքաղաքային/բջջային զանգերը, արգելափակվում են նաև ֆիքսված հեռախոսակապի այլ օպերատորների ցանցեր ուղղված հեռախոսազանգերը: «ԱրմենՏել» ընկերության նման վարքագիծը Հանձնաժողովի կողմից որակվել է որպես գերիշխող դիրքի չարաշահում և վերջինիս տրվել է նախազգուշացում՝ խախտումները վերացնելու և հետագայում բացառելու հանձնարարությամբ:

«Ապակեմեկուսիչ» բաց բաժնետիրական ընկերության բողոքի հիման վրա ուսումնասիրություն է կատարվել «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների ոլորտում:

«Ապակեմեկուսիչ» բաց բաժնետիրական ընկերությունը 2013 թվականի ընթացքում դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն թույլ է տալիս գերիշխող դիրքի չարաշահում՝ առանց հիմնավոր պատճառների ջրագրկելով իրենց կազմակերպությանը: Մասնավորապես ընկերությունը նշել է, որ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն անջատել է ընկերությանը մատակարարվող ջուրը, հայտնելով, որ վերջինս կուտակել է մեծ պարտքեր և ջրամատակարարումը վերսկսելու համար պետք է վճարի առկա պարտքերը:

Ընկերությունը հայտնել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին, որ տվյալ պարտքը կուտակվել է այն պատճառով, որ իր սեփականություն հանդիսացող դիտահորում առկա են եղել ապօրինի ջրամիացումներ, որոնցից մեկում տեղի է ունեցել վթար և ջրի արտահոսք, որն էլ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից դիտարկվել է, որպես ընկերության կողմից ջրի սպառում:

Այսինքն՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն դադարեցրել է ընկերության ջրամատակարարումը՝ հաշվի չառնելով իրենց կողմից տրված սխալ տեխնիկական պայմանը, ինչպես նաև ընկերությանը պատկանող դիտահորում առանց ընկերության համաձայնության կատարված միացումները, որոնք էլ հանգեցրել են վթարի և ջրի

արտահոսքի:

Բերված բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողովի կողմից կազմակերպված երկկողմանի քննարկման արդյունքում 2013 թվականի մայիսի 13-ին «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն գրություն է ներկայացրել Հանձնաժողով՝ հայտնելով, որ վերը նշված խնդիրները քննարկվել է ընկերության հետ և եկել են համաձայնության, արդյունքում բաժանորդի ջրամատակարարումը վերականգնվել է:

Հանձնաժողովը հաշվի է առել, որ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից վերացվել է Օրենքի խախտման համար հիմք հանդիսացած հանգամանքների մեծ մասը և որոշում է կայացրել «Խմելու ջուր» ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերության վարքագիծը դիտարկել որպես գերիշխող դիրքի չարաշահում, դրա հիման վրա տալ նախազգուշացում և խախտումները հետագայում բացառելու հանձնարարություն:

Հանձնաժողովը դեռևս 2012 թվականին բողոք էր ստացել «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության գործունեության վերաբերյալ: Խոսքը վերաբերում էր տոմսերի վաճառքի և դրանց հետվերադարձի խնդիրներին: Մասնավորապես ընկերությունն էլեկտրոնային տոմսերի դեպքում դրանք ընդհանրապես հետ չէր վերցրել, իսկ թղթայինի դեպքում գանձել էր տուգանք՝ տոմսի արժեքի 15%-ի չափով: Նաև տոմսերի ձեռքբերման համակարգն այնպիսին էր, որ թույլ չէր տալիս միաժամանակ ձեռք բերել մեկնման և հետվերադարձի տոմսերը, ինչպես նաև վազոնում ազատ տեղերի միջև ընտրություն կատարել: Բողոք էր ներկայացվել նաև էլեկտրոնային տոմսերի բարձր գների վերաբերյալ: Հարուցված վարույթի ընթացքում, ի շնորհիվ Հանձնաժողովի միջամտության և բերված ծանրակշիռ փաստարկների, ընկերությունը լուծել էր վերոնշյալ խնդիրների հիմնական մասը, մասնավորապես՝ էլեկտրոնային տոմսերի հետվերադարձի խնդիրը՝ ներդնելով տոմսերի վերադարձման ժամկետից կախված սանդղակ, որը ստեղծել էր սպառողների համար առավել բարենպաստ պայմաններ և գրավոր պարտավորություն էր ստանձնել որոշակի ժամանակահատվածում շտկելու դեռևս տվյալ պահին առկա խնդիրները:

Ընկերությունը 2013 թվականի մայիս-հունիս ամիսների դրությամբ կատարել է նաև ստանձնած պարտավորությունները և լուծել հետևյալ խնդիրները.

1. 2013 թվականի հունիսի 15-ից ամբողջովին ներդրվել է միջազգային գնացքների ուղևորային փաստաթղթերի ձևակերպման ավտոմատացված (Օրիոն) ծրագրի նորացված տարբերակը, որն ապահովում է ինտերնետով մեկնման և հետվերադարձի էլեկտրոնային տոմսերի ընտրությունը մեկ գործողությունով

2. ինտերնետ տոմսերի վաճառքի համար սպասարկման արժեքը նվազեցվել է մոտ 2 անգամ

3. ներդրվել է սեզոնային գնացքների համար տոմսերի վաճառքի նոր համակարգ, որն ապահովում է տոմսերի ազատ, առանց սահմանափակումների վաճառք:

Հանձնաժողովն օպերատիվ արձագանքել է զանգվածային լրատվական միջոցների հրապարակումներին, տնտեսվարող սուբյեկտների դիմումներին, «թեժ գծի» միջոցով ստացված բողոքներին, ինչը թույլ է տվել ոչ միայն անմիջական կապ պահպանել սպառողների, քաղաքացիների և մրցակից ընկերությունների հետ, աշխատել թափանցիկ և արդյունավետ, այլ նաև կիրառել կանխարգելիչ միջոցներ և դադարեցնել տնտեսվարող սուբյեկտների կողմից հնարավոր խախտումները:

Մասնավորապես Հանձնաժողով ստացված բողոքի հիման վրա և Հանձնաժողովի միջնորդությամբ լիազոր մարմինը վերանայել և իջեցրել է Երևան-Վանաձոր և հակառակ ուղղությամբ չհիմնավորված բարձրացված ուղևորափոխադրումների փոխադրավարձը:

Նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետությունում ձևավորել արդյունավետ մրցակցային միջավայր՝ Հանձնաժողովը պարբերաբար իրականացնում է առանձին ապրանքային շուկաների ուսումնասիրություններ, որոնց միջոցով հսկողություն է իրականացվում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների պահպանման նկատմամբ: 2013 թվականին ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության ավիացիայի ոլորտը, որի հիմնական նպատակը ոլորտի մրցակցային միջավայրի գնահատումն է ու դրա բարելավման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության Կառավարությանը համապատասխան առաջարկությունների ներկայացումը: Փորձելով բացահայտել Հայաստանի Հանրապետության ավիացիայի ոլորտի մրցակցային հնարավոր խնդիրները՝ Հանձնաժողովն ուսումնասիրել է ավիացիայի վերաբերյալ կնքված Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերը, տարբեր միջազգային կառույցների կողմից Հայաստանի Հանրապետության ավիացիայի ոլորտի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության և «Արմավիա» ավիաընկերության հետ Հանձնաժողովում կազմակերպված բազմաթիվ քննարկումներում ներկայացված մոտեցումները, ոլորտի ազատականացման վերաբերյալ մի շարք միջազգային փորձագետների ներկայացրած դիրքորոշումները և այլն: Ուսումնասիրության արդյունքում կազմվել է «Հայաստանի Հանրապետության ավիացիայի ոլորտում մրցակցային միջավայրի գնահատման և զարգացման հեռանկարների վերաբերյալ» տեղեկանք և ներկայացվել Հայաստանի Հանրապետության Կառավարություն՝ հրապարակման:

Հանձնաժողովը 2013 թվականին ստացել է բողոք Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից, որը վերաբերել է նախարարության աշխատակիցների Աստանա և Լիվիինգստոն գործուղումների համար ավիատոմսերի ձեռքբերմանը, որոնց գները եղել են բարձր: Քաղաքացու դիմումի հիման վրա հարուցվել է մեկ այլ վարչական վարույթ Երևան-Դուբայ-Երևան չվերթների ավիատոմսերի գների բարձրացման վերաբերյալ: Հանձնաժողովը 2013 թվականին թեժ գծով ստացել է բողոք «Բագրատուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ավիատոմսերի վաճառքի ընթացքում խտրական և տարբերակված մոտեցում ցուցաբերելու վերաբերյալ: Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունների ընթացքում նշված դեպքերում մրցակցային օրենսդրության խախտումներ չեն հայտնաբերվել:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը դիմել է Հանձնաժողով, հայտնելով որ «Կաթնամթերք արտադրողների միություն» իրավաբանական անձանց միության անդամները բարձրացրել են կաթնամթերքի արտադրության մի շարք հումքատեսակների թանկացմամբ պայմանավորված ընկերությունների գնային քաղաքականության վերանայմանն առնչվող հարցեր: Ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքների հիման վրա Հանձնաժողովը ներկայացրել է համապատասխան դիրքորոշում:

Հանձնաժողովի կողմից «Արագեն» հայ-գերմանական համատեղ ձեռնարկություն

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բողոքի հիման վրա ուսումնասիրություններ են իրականացվել «Երևան Զուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ոլորտում: Մասնավորապես «Երևան Զուր» փակ բաժնետիրական ընկերությունը բաժանորդներին ստիպել է «Արագեն» ընկերության արտադրության ջրաչափերը, որոնք արդեն իսկ «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ստուգաչափում են անցել, կրկնակի ստուգաչափել իր լաբորատորիայում և հաճախորդներից գանձել է լրացուցիչ գումար: Հանձնաժողովի օպերատիվ միջամտության արդյունքում «Երևան Զուր» ՓԲ ընկերությունը պատրաստակամություն է հայտնել լուծելու առաջացած խնդիրները, ինչի կապակցությամբ էլ «Արագեն» ընկերությունը խնդրել է կարճել վարույթը, քանի որ ուսումնասիրության արդյունքում, ըստ էության, խնդիրները լուծվել են:

«Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ «Տրանսպորտի ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից հայտարարված շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների գնման գործընթացին հայտեր ներկայացրած ընկերությունների փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում առաջացել են կասկածներ՝ հայտեր ներկայացրած ընկերությունների կողմից հակամրցակցային համաձայնությունների կայացման վերաբերյալ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գրեթե բոլոր մրցույթներում հաղթող ճանաչված ընկերության գնային առաջարկները բավականին ցածր են եղել մյուս ընկերությունների համեմատ, ինչի հետևանքով էլ նրանք հաղթող են ճանաչվել այդ մրցույթներում: Հանձնաժողովը մրցակցության օրենսդրության խախտման փաստեր չի հայտնաբերել:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրություններ են իրականացվել նաև մաքսային միջնորդական գործունեության, ինչպես նաև ցորենի թեփի արտադրության և իրացման ոլորտներում:

Մրցակցության պաշտպանության, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից կարևոր խնդիրներից է հանդիսանում անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտումը, կանխարգելումը և դադարեցումը:

Ապրանքային շուկաներում ապրանքների հագեցվածությամբ, բնակչության համեմատաբար ցածր վճարունակությամբ պայմանավորված՝ տնտեսվարող սուբյեկտները հաճախ ցուցաբերում են անբարեխիղճ մրցակցության վարքագիծ:

Այս առումով Հանձնաժողովն անց է կացրել լայնածավալ ստուգումներ տեղերում՝ բացահայտելով տնտեսվարողների կողմից **անբարեխիղճ գովազդի միջոցով** մրցակցության օրենսդրությունը խախտելու մի շարք դեպքեր: Մասնավորապես՝ Հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում հայտնաբերել է զանգվածային լրատվական միջոցներով, ինտերնետային կայքերով, ռադիոյով և հեռուստատեսությամբ, SMS հաղորդագրությունների միջոցով հեռարձակվող անբարեխիղճ գովազդի շուրջ 13 դեպք: Նշված դեպքերը Հանձնաժողովի կողմից որակվել են հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն, և մի շարք տնտեսվարողների նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ:

Հանձնաժողովն ինչպես բողոքների հիման վրա, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրություն է իրականացրել հեռուստատեսային գովազդի շուկայում: Պարզվել է, որ մի շարք դեպքերում հեռարձակվող գովազդները

հանրությանը ներկայացնում են կեղծ, իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն և, բացի այդ, վարկաբեկում են մրցակից ընկերություններին՝ օգտագործելով այնպիսի արտահայտություններ և առավելապես գերադրական աստիճաններ, որոնց գործածությունն արգելվում է մրցակցային օրենսդրությամբ, եթե դրանք զուրկ են հիմնավորվածությունից:

Վերջին ժամանակներում հաճախակի են դարձել բողոքները կապված **մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ այլ տնտեսվարող սուբյեկտի իրավունքի օգտագործման**, ինչպես նաև յուրացման փաստերի վերաբերյալ:

Այսպես, Հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում հայտնաբերել է այլ տնտեսվարող սուբյեկտի կողմից գրանցված ապրանքային նշանի օգտագործման, այլ ընկերության կողմից կատարված աշխատանքները որպես սեփական աշխատանքի արդյունք ներկայացնելու, գրանցված ապրանքային նշանին շփոթության աստիճանի նման չգրանցված ապրանքային նշանի օգտագործման կամ առաջարկված ապրանքների նկատմամբ շփոթության առաջացման՝ անբարեխիղճ մրցակցության գործողության շուրջ 11 դեպք:

Նշված գործերից առանձին հետաքրքրություն է ներկայացնում «Օրանժ Արմենիա» ընկերության դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը: «ԱրմենՏել» ընկերությունը հաշվետու տարվա սեպտեմբեր ամսին մեկնարկել է նոր սակագնային փաթեթ՝ «Պարզից Պարզ» անվանմամբ, որը հնարավորություն է տվել զանգեր կատարել Հայաստանի Հանրապետության բոլոր ցանցեր նույն սակագնով: «Օրանժ Արմենիա» ընկերությունը հայտնել է, որ այն իր՝ «Պարզ» անվանումով սակագնային փաթեթի կրկնօրինակումն է և տեղեկացրել է, որ այդ անվանումը դեռևս 2011 թվականին գրանցվել է մտավոր սեփականության գործակալությունում՝ որպես սպասարկման նշան: Ըստ «Օրանժ Արմենիա» ընկերության, «ԱրմենՏելի» կողմից գործարկված «Պարզից Պարզ» սակագնային փաթեթն ունի նույն սկզբունքները և առաջացնում է շփոթություն իրենց ընկերության «Պարզ» անվանումով սպասարկման նշանի հետ: Դիմողը նաև հայտնել է, որ «ԱրմենՏել» ընկերության «Պարզից Պարզ» սակագնային փաթեթի գովազդում ներկայացված են նարնջագույն և կարմիր գույներով ներկված բիլիարդի գնդակներ. դրանք ակնհայտորեն մատնացույց են անում շարժական կապի մյուս 2 օպերատորներին, որոնք համարվում են «պայքարում պարտված»: Ըստ «Օրանժ Արմենիա» ընկերության, «ԱրմենՏելի» նման վարքագիծը վնասում է կամ կարող է վնաս պատճառել իրենց համբավին և գործարար վարկանիշին: «Օրանժ Արմենիա» ընկերությունը Հանձնաժողովից խնդրել է «ԱրմենՏել» ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառել և պարտադրել, որպեսզի վերջինը վերացնի վերոնշյալ խախտումները: «Օրանժ Արմենիա» ընկերության դիմում-բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը պարզաբանումներ է պահանջել «ԱրմենՏել» ընկերությունից: Սակայն խնդրի հետ կապված ընկերությունը որևէ հիմնավոր պատճառաբանություն չի ներկայացրել: Հանձնաժողովի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ «ԱրմենՏել» ընկերության կողմից Օրենքի խախտման, մասնավորապես անբարեխիղճ մրցակցության փաստն իսկապես առկա է, ինչի համար էլ վերջինս ենթարկվել է ֆինանսական պատասխանատվության՝ 20 մլն դրամի չափով: Հանձնաժողովն «ԱրմենՏել» ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց նշանակելիս հաշվի է առել, որ իրավախախտումը տևել է երկու ամսից պակաս ժամանակահատվածում, ընկերության նկատմամբ նախկինում ևս

պատասխանատվության միջոց է կիրառվել անբարեխիղճ մրցակցության գործողության համար:

Հանձնաժողովը մի շարք գործերով, որոնք հիմնականում վերաբերում էին շինարարական աշխատանքների, քիմիական ապրանքների արտադրության ոլորտներին, կիրառել է պատասխանատվության միջոցներ: Իսկ առանց իրավատիրոջ համաձայնության ապրանքային նշանների օգտագործման, ինչպես նաև արտադրության և իրացման ընթացքում գրանցված ապրանքային նշաններին շփոթության աստիճանի նման չգրանցված ապրանքային նշանների օգտագործման համար ընկերություններին տրվել են նախազգուշացումներ և կիրառվել նաև զգուշացումներ:

Հանձնաժողովը նաև բացահայտել է **հասարակության մոլորեցման**՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորման մի շարք դեպքեր ապրանքի բնութագրեր (արտադրող տնտեսվարող սուբյեկտի անվանում, արտադրության տարեթիվ, ամիս, օր) և այլ տեղեկատվություն չհիշատակելու առնչությամբ և մի շարք տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոց:

Վերջին ժամանակահատվածում լայն տարածում է ստացել որպես օրգանական կամ էկոլոգիապես մաքուր սննդամթերքի շրջանառությունը: Ուսումնասիրության ընթացքում Հանձնաժողովը բացահայտել է, որ 8 տնտեսվարող սուբյեկտների կողմից արտադրվում են «Էկոլոգիապես մաքուր արտադրանք», «Բիո», «Էկո», «Օրգանական» և նման անվանումներով մթերքներ՝ առանց դրանց համապատասխանությունը փաստող հիմքերի առկայության: Խախտումներ են հայտնաբերվել մասնավորապես հացի, հրուշակեղենի, մեղրի, պահածոների, ձավարեղենի, թեյի և այլ շուկաներում: Ի պատասխան Հանձնաժողովի պահանջի, վերոնշյալ ընկերությունները հիմնավորել են, որ տեղյակ չեն եղել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին, հարուցված վարչական վարույթի ընթացքում օպերատիվ կերպով ձեռնամուխ են եղել խախտումների վերացմանը, և քանի որ նմանատիպ խախտում էին իրականացրել առաջին անգամ, Հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվել է առավել մեղմ պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում: Միաժամանակ Հանձնաժողովը կոչ է արել սպառողներին, կասկած հարուցող նման դեպքերի առնչվելիս՝ թե՛ գծի միջոցով դիմել Հանձնաժողով:

Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև մի քանի տաքսի ծառայությունների վարքագծի վերաբերյալ դժգոհությունների հիման վրա, ուսումնասիրություն է իրականացրել տաքսի ծառայությունների ոլորտում: Տևական ժամանակ Հանձնաժողովի մասնագետները, ուսումնասիրություն իրականացնելով 19 տնտեսվարող սուբյեկտների մոտ, բացահայտել են խախտումներ:

Այսպես, մեքենաների ներսում տեղադրված տաքսոմետրի վրա, 1 կմ գին որպես կանոն նշված է 100 դրամ, իսկ ծառայության համար նվազագույն պարտադիր վճար՝ 600 դրամ, որը ենթակա է փոփոխման՝ սկսած 6-րդ կիլոմետրից: Հարուցված վարչական վարույթների ընթացքում պարզվել է, որ ուղևորափոխադրման ընթացքում տաքսոմետրերի վրա նշված 600 դրամ նվազագույն պարտադիր վճարը հիմնականում փոփոխվում է արդեն սկսած 4,1 կմ-ից (առանձին դեպքում 2,1 կմ-ից): Ստացվում է, որ 1 կմ-ի համար սահմանված ուղեվարձն իրականում ոչ թե 100 դրամ է, ինչպես հայտարարվում է վերջինների կողմից, այլ՝ 120-ից 150 դրամ:

Փաստորեն, ընկերությունների կողմից ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման ընթացքում ծառայության արժեքի և բոլոր էական պայմանների

վերաբերյալ լիարժեք տեղեկություններ սպառողներին չեն ներկայացվել, ինչն Օրենքի խախտում է:

Ընկերություններն առաջին անգամ են հայտնվել Հանձնաժողովի տեսադաշտում, և միևնույն ժամանակ Հանձնաժողովի ռեսուրսների սահմանափակության պատճառով ուսումնասիրությունը կատարվել է ընտրանքային կերպով. խախտումներ է բացահայտվել բոլոր այն ընկերությունների մոտ, որտեղ անցկացվել են հսկիչ գնումներ: Սակայն, միայն Երևան քաղաքում գործում են հարյուրավոր տաքսի ծառայություններ: Հետևաբար այն ընկերությունները, որոնք Հանձնաժողովի տեսադաշտում չեն հայտնվել, ստացվում է, որ դուրս են մնացել պատասխանատվությունից: Այլ կերպ ասած՝ Հանձնաժողովի նման մոտեցումը պայմանավորված է նաև նրանով, որ տնտեսվարողների հանդեպ չկիրառվի խտրական մոտեցում: Ուստի Հանձնաժողովը համեմատաբար մեղմ մոտեցում է դրսևորել. անբարեխիղճ վարքագիծ դրսևորելու համար ընկերությունների հանդեպ կիրառվել է նախազգուշացում:

Հանձնաժողովը շարունակելու է ուսումնասիրություններն այս ոլորտում և լինելու է հետևողական, որպեսզի խախտումները վերացվեն: Այնուհանդերձ, ուսումնասիրելով նաև միջազգային փորձը, Հանձնաժողովը գտնում է, որ, օրենսդրությամբ պետք է սահմանվեն հստակ պահանջներ, որոնք կպարտադրեն, որպեսզի տաքսի ծառայությունները լիարժեք և ամբողջական տեղեկատվություն տրամադրեն իրենց պատվիրատուներին:

Հանձնաժողովն այս ուղղությամբ իր առաջարկները ուղարկել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն՝ համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելու նպատակով:

Հանձնաժողովը դիտանցումներ է իրականացրել հագուստի վաճառքով զբաղվող մի շարք խանութներում՝ ուսումնասիրելու վերջինների գեղչային քաղաքականությունը:

Պարզվել է, որ տասնյակ դեպքերում խանութների դիմապակիներին փակցված գեղչերն իրականությանը չեն համապատասխանում: Օրինակ, նշված է 50 կամ 70 տոկոս գեղչ՝ ողջ տեսականու համար, սակայն գեղչը գործել է միայն հատուկենտ ապրանքների գնման դեպքում: Դիտանցումներով պարզվել է նաև, որ որոշ դեպքերում գեղչը գործել է խանութի տեսականու ընդամենը 5 տոկոսի վրա, չնայած այն բանին որ գովազդվել է գեղչ՝ ողջ տեսականու համար:

Նման կերպ տնտեսվարողներն ակնհայտորեն մոլորեցնում են սպառողին, որոնք գայթակղվելով իբրև թե մատչելի առաջարկներով այցելում են տվյալ խանութ՝ տեղում տեղեկանալով, որ հայտարարված գեղչը գործում է հաշված ապրանքների և հիմնականում հին հավաքածուների ձեռք բերման դեպքում միայն: Հանձնաժողովի որոշումներով 13 ընկերությունների նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ՝ խախտումները վերացնելու և հետագայում բացառելու հանձնարարականով:

«ԲԻ ԷՍ ԷՅ» ընկերության, «Մայքրոսոֆթ» կորպորացիայի մտավոր սեփականության իրավունքների և օրինական շահերի լիազոր ներկայացուցիչը Հանձնաժողով է ներկայացրել դիմում՝ հայտնելով, որ Երևան քաղաքի 58 խանութներում գործարկվել է «գաղտնի գնորդ» ծրագիրը, որի նպատակն է եղել համակարգչային տեխնիկայի իրացմամբ զբաղվող ընկերությունների մեջ համակարգչային հենության մակարդակի վերաբերյալ տվյալների հավաքագրումը: Ծրագրի շրջանակներում պարզվել է, որ մի շարք առևտրի օբյեկտներում

սպառողներին առաջարկվում են համակարգչային ծրագրերի նախապես տեղադրված հենային (չարտոնագրված) տարբերակներ: Հանձնաժողովը դիմումի հիման վրա հարուցել է վարչական վարույթ: Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն ամրագրել է, որ ընկերությունների նման գործունեությունը կարող է հանգեցնել անբարեխիղճ մրցակցության գործողության կամ վնասել սպառողների շահերը և 14 տնտեսվարող սուբյեկտների տրվել է զգուշացում՝ հանձնարարելով ձեռնպահ մնալ սպառողներին համակարգչային ծրագրերի հենային (չարտոնագրված) տարբերակները առաջարկելու կամ իրացնելու գործողություններից, որոնք կարող են հանգեցնել անբարեխիղճ մրցակցության գործողությանը կամ վնասել սպառողների շահերին:

3.1) մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծությունը.

Հանձնաժողովը աշխատանքներ է իրականացրել տնտեսական մրցակցության ոլորտում օրենսդրական բարեփոխումները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Մաքսային միությանն անդամակցելու գործընթացների արդյունքում առաջացող անհրաժեշտ օրենսդրության ներդաշնակեցման նպատակով:

Մրցակցության ոլորտում օրենսդրական բարեփոխումները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով Հանձնաժողովը մշակել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Սնանկության մասին», «Հայաստանի Հանրապետության ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծեր (այսուհետ՝ Օրենքների նախագծեր), որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից և ներկայացվել է Ազգային ժողով:

Վերոնշյալ Օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է՝

1. Հանձնաժողովի կողմից կայացվող որոշումներով նշանակվող տուգանքների գանձման արդյունավետ մեխանիզմների սահմանմամբ,

2. Օրենքի խախտումների համար տուգանքների չափերի համար միասնական մոտեցումների ապահովմամբ:

Նշված նախագծերի ընդունումն էապես կնպաստի Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի բարելավման, Օրենքի խախտումների կանխման, բացահայտման և հետևանքների վերացմանն ուղղությամբ:

Ներկայումս առկա են մի շարք խնդիրներ, որոնք գործող օրենսդրությամբ լիարժեք հնարավորություն չեն տալիս Հանձնաժողովին արդյունավետորեն լուծելու իր առջև դրված խնդիրները:

– Գործող Օրենքով սահմանված տուգանքի չափերը միասնական չեն և չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին: Մասնավորապես, մի դեպքում տուգանքի չափը որոշվում է կոնկրետ դրամային արտահայտությամբ, իսկ մյուս դեպքում կախված է տնտեսվարող սուբյեկտի նախորդ տարվա հասույթից: Հետևաբար, տվյալ դեպքում տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվում են տարբեր մոտեցումներ՝ կախված այն հանգամանքից, թե սուբյեկտը մրցակցային օրենսդրության ինչ խախտում է թույլ տվել: Մասնավորապես, նախորդ տարում առավել փոքր հասույթ ունեցող սուբյեկտները հայտնվում են բարենպաստ վիճակում՝ հասույթով որոշվող իրավախախտումների համար պատասխանատվության կիրառման դեպքում, իսկ խոշոր հասույթ ունեցողները՝ կոնկրետ դրամային արտահայտությամբ տուգանքների կիրառման դեպքում:

– Հանձնաժողովի ներկա խնդիրներից է տնտեսվարող սուբյեկտների կողմից տուգանքի վճարման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը: Այսպես, հաճախ տնտեսվարող սուբյեկտները Հանձնաժողովի՝ տուգանք նշանակելու մասին որոշումը բողոքարկում են վարչական կամ դատական կարգով և խուսափում են սահմանված ժամկետում տուգանքի վճարումից, անհարկի ձգձգում են որոշման

կատարումը, երբեմն էլ ուղղակի չեն վճարում նշանակված տուգանքը՝ անգամ չբողոքարկելով որոշումը: Մինչդեռ Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ Հանձնաժողովի որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը (կատարումը), սակայն նշված դրույթը կիրառության տեսակետից արդյունավետ չէ:

– Հանձնաժողովի գործունեության, միջազգային փորձի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Օրենքում առկա են մի շարք անհստակություններ, բացեր, սողանցքներ, որոնք բացասաբար են անդրադառնում Հանձնաժողովի գործունեության արդյունավետության վրա: Մասնավորապես, բացեր և անհստակություններ առկա են Օրենքի հիմնական հասկացություններին, հակամրցակցային համաձայնություններին, գերիշխող դիրքի որոշմանը և չարաշահմանը, համակենտրոնացումներին, անբարեխիղճ մրցակցության դրսևորումներին, վարչական վարույթի իրականացմանը և մի շարք այլ խնդիրներին վերաբերող հոդվածներում:

– Ներկայումս Հանձնաժողովում տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա համակենտրոնացման հայտարարագրման մեծ քանակությամբ վարույթներ են իրականացվում: Նշված վարույթների իրականացումը բավականին շատ ռեսուրսներ և ծախսեր է պահանջում:

Օրենքում առկա խնդիրները լուծելու նպատակով.

1. Օրենքի նախագծով սահմանվում է տուգանքների որոշման միասնական մոտեցում՝ կախված տնտեսվարող սուբյեկտի նախորդ տարվա հասույթի չափից, ինչպես նաև տուգանքի չափերի համապատասխանեցում միջազգային չափանիշներին:

2. Տուգանքի գանձման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով սահմանվում է մեխանիզմ, համաձայն որի՝ 10-օրյա ժամկետում տուգանքը վճարած տնտեսվարող սուբյեկտների համար նշանակված տուգանքի չափը կրճատվում է 20 տոկոսով:

3. Օրենքի նախագծով հստակեցում և կարգավորում են ստանում խնդրահարույց դրույթները և իրավահարաբերությունները: Մասնավորապես, կարգավորվում են անձանց խմբի, հակամրցակցային համաձայնությունների վերաբերյալ բացառությունների, գերիշխող դիրքի չարաշահումների, համակենտրոնացումների, պատասխանատվությունից ազատման և տուգանքի չափի նվազեցման հետ կապված դրույթներում տեղ գտած անհստակությունները:

4. Խնդրի կապակցությամբ ուսումնասիրվել է միջազգային փորձը համակենտրոնացումների հայտարարագրման վարույթների ընթացակարգերի վերաբերյալ: Ուսումնասիրված բոլոր երկրներում հայտարարագրման նպատակով համակենտրոնացման մասնակիցներից գանձվում է հայտարարագրման վճար, որի չափը տարբեր երկրներում կախված է տարբեր չափանիշներից: Մասնավորապես, Գերմանիայում հայտարարագրման վճարի չափը պայմանավորված է համակենտրոնացման տնտեսական կարևորությամբ և Գերմանիայի մրցակցային մարմնի կատարած աշխատանքի ու նյութական ռեսուրսների օգտագործման հանգամանքներով:

Այդ կապակցությամբ Օրենքում փոփոխություն է նախատեսվում համակենտրոնացման հայտարարագրման նպատակով համակենտրոնացման մասնակիցներից հայտարարագրման վճարի գանձում, որի չափը կազմում է համակենտրոնացման մասնակիցների հասույթների ընդհանուր չափի 0,1 տոկոսը կամ

ակտիվների ընդհանուր արժեքի 0,1 տոկոսը, եթե դրա չափն ավելի մեծ է համակենտրոնացման մասնակիցների հասույթների ընդհանուր չափի 0,1 տոկոսից:

Օրենքների նախագծերի ընդունմամբ էականորեն կմեծանա տնտեսական մրցակցության օրենսդրության պաշտպանության նկատմամբ վերահսկողության, բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովման, հակամրցակցային գործունեության կանխարգելման, սահմանափակման և նախագուշացման ոլորտներում Հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը, զգալիորեն կբարձրանա գնումների գործընթացի վերանայման ընթացակարգի արդյունավետությունը, կստեղծվեն գործուն մեխանիզմներ գնումների գործընթացում դրսևորվող խախտումների բացահայտման, վերացման, խախտում թույլ տված սուբյեկտների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառման առումով:

Հանձնաժողովը շարունակելու է տնտեսական մրցակցության ոլորտում օրենսդրական բարեփոխումները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Մաքսային միությանն անդամակցելու գործընթացների արդյունքում առաջացող անհրաժեշտ օրենսդրության ներդաշնակեցման նպատակով:

Հանձնաժողովը, նպատակ ունենալով ձևավորվելու միասնական մոտեցում և հանրապետությունում զարգացնել «մրցակցային մշակույթը», սերտ համագործակցում է շահագրգիռ այլ մարմինների հետ՝ տրամադրելով համապատասխան տեղեկատվություն իրենց իրավասության ներքո գտնվող խնդիրների և դրանց հետագա հնարավոր լուծման վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնելով համապատասխան առաջակներ կամ դիրքորոշում՝ տարբեր ոլորտներում օրենսդրական դաշտում առկա բացերի վերացմանը, որոնք խոչընդոտում են արդար մրցակցային միջավայրի ապահովմանը: Մասնավորապես, առաջարկություններ են ներկայացվել պետական գնումների ոլորտում բողոքարկման գործընթացները բարելավելու, գյուղատնտեսության ոլորտում կաթնամթերքի արտադրության մի շարք հումքատեսակների թանկացմամբ պայմանավորված ընկերությունների գնային քաղաքականության վերանայմանը, օդային տրանսպորտի ոլորտում ազատականացմանն առնչվող և այլ հարցերի վերաբերյալ:

Հասարակությանը հուզող հարցերին առավել մեծ ուշադրություն հատկացնելու համար Հանձնաժողովին կից ստեղծված հասարակական խորհուրդը նպատակ ունի իր կազմում ընդգրկված պետական, հասարակական և գործարար հատվածի ներկայացուցիչների հետ համատեղ աշխատանքի արդյունքում առավել արագ և արդյունավետ արձագանքել հասարակությանն անհանգստացնող խնդիրներին:

Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված աշխատանքների շրջանակներում պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ Հասարակական խորհրդի անդամների հետ: Այս հանդիպումների նպատակն է գործարար համայնքի ներկայացուցիչների, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների և ոլորտային տարբեր մարմինների ներկայացուցիչների հետ միասին քննարկել մրցակցության ոլորտին առնչվող խնդրահարույց հարցեր, որոնք հնարավոր է դուրս մնան Հանձնաժողովի տեսադաշտից: Այս առումով, կարևորվում են մասնակիցների առաջարկները, որոնց հիման վրա Հանձնաժողովը վերանայում է իր աշխատանքային գործունեության ուղղությունները և դրանք դարձնում առավել նպատակային ու արդյունավետ:

Գլուխ 4. Հանձնաժողովի 2013 թվականի գործունեության ֆինանսական հաշվետվություն

Հանձնաժողովի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Հայաստանի Հանրապետության 2013 թվականի բյուջեով, որպես Հանձնաժողովի աշխատակազմի պահպանման ծախս նախատեսվել է 266687.90 հազար դրամ, ծախսվել է 266273.86 հազար դրամ:

Աղյուսակ 2
(Հազար դրամ)

Հանձնաժողովի տարեկան ծախսերը

<i>Բյուջեային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի</i>	<i>Տարեկազբին հաստատված տարեկան նախահաշիվ</i>	<i>Դրամարկղային ծախս</i>
<i>Անվանումը</i>		
Ընթացիկ ծախսեր	266687,90	266273,86
– Աշխատողների աշխատավարձեր և այլ հավելավճարներ	224792,8	224792,8
– Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	7559,5	7559,5
– Էներգետիկ ծառայություններ	4159,4	4094,9
– Կոմունալ ծառայություններ	130,5	106,6
– Կապի ծառայություններ	6146,9	6146,9
– Ապահովագրական ծախսեր	200,0	192,0
– Ներքին գործուղումներ	3136,4	3136,4
– Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	5180,8	5161,8
– Տեղեկատվական ծառայություններ	1077,8	1077,8
– Ներկայացուցչական ծախսեր	500,0	500,0
– Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1800,0	1766,8
– Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4634,2	4515,8
– Գրասենյակային նյութեր և հագուստ	1420,7	1300,3
– Տրանսպորտային նյութեր	5637,4	5615,4
– Կենցաղային և հանրային սննդի նյութեր	137,1	137,1
– Հատուկ նպատակային այլ նյութեր	0,0	0,0
– Այլ հարկեր	0,0	0,0
– Պարտադիր վճարներ	174,4	169,7